

## ԼՈՒՐԵՐ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԻՑ

### ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ ԴԻԻԱՆԱՊԵՏ

### Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՅՅԸ

### ԻՐԱՔԱՀԱՅՈՑ ԹԵՄ

/13-30 նոյեմբեր 1997/

1997 թուականին, որ գուգադիպեց Պաղտատի Առաջնորդամիտ Սր. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ կառուցման 40-ամեակին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ և Քրաւէրովը Ազգային Առաջնորդարանի, Պաղտատ կը ժամանէ Մայր Աթոռ Սր. Էջմիածնի դիւանապետ գերշն. Տ. Ներսէս արք. Պօգապալեանը, մասնակցելու յաւոր պատշաճի տեղի ունենալիք Քանդիսութեանց և եկեղեցական արարողութեանց:

Նոյեմբեր 13-ի եջ. օր, Քիւր սրբազանը, ընկերակցութեամբ թեմիս քարեխնամ առաջնորդ գերշն. Տ. Ասագ արք. Ասատուրեանի, որը այդ օրերուն Հայաստան կը գտնուէր, կը ժամանի Պաղտատ: Յաջորդ օրն իսկ՝ Ուրբաթ, 14 Նոյեմբերին տեղի կ'ունենայ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ արարողութեանց Քանդիսաւոր վերսկսումը, զոր քանի մը ամիսներէ ի վեր փակ էր վերանորոգութեանց պատճառաւ, իսկ ամսոյն 21-ին Քիւր սրբազանը կը մատուցանէ իր անդրանիկ Պատարագը սոյն եկեղեցիէն ներս, միաժամանակ կատարելով սարկաւազական ձեռնադրութիւն թեմիս մէջ ծառայող երկու արժանաւոր զաւակաց:

Սրբազանը իր կեցութեան ընթացքին պաշտօնական այցելութիւններ կատարեց Պաղտատի մէջ գործող բոլոր միութեանական հաստատութիւններն ու կազմակերպութիւնները, ուր դիմաւորուեցաւ մեր հարազատ ժողովորդին կողմէ մեծաւ ծարաւով և խանդավառութեամբ:

Հիւր սրբազանը մասնաւոր այցելութիւն կատարեց երկրիս կրօնից և կալուածոց նախարարին, որն իր հերթին, յաջորդ օրն իսկ, ներ շրջանակի մէջ պաշտօնական ճաշի հրաւեր մը ըրաւ ի պատիւ քարձրաստիճան Քոզմորականին: Անտարակոյս, այցելութեանց ցանկին մէջէն չէր կրնար վրիպիլ քոյր Եկեղեցիներու Առաջնորդներուն հետ հանդիպումը, որոնք ևս փոխադարձ այցելութիւն մը կատարեցին և ընդունուեցան Առաջնորդարանիս պաշտօնական դահլիճին մէջ: Յատկանշական է Պաղտատի մէջ Պապական դեսպանին հետ ունեցած հանդիպումը Նոյեմբեր 19-ին:

Սրբազանը պտոյտներ կատարեց նաև իրաքի զանազան շրջաններ, դիտելու երկրիս որոշ տեսարժան, պատմական և Ս. Գրական վայրեր և այլն:

Հիւր սրբազանը Վօտէն ծանօթացաւ նաև մեր ժողովորդին, հայրական քաղցր հարազատութիւն ցուցաբերելով անոնց նկատմամբ, որուն շարունակութիւնը պիտի ըլլար Քերքուկի և Մուսուլի մեր զաւակաց տուած այցելութիւնը ընդ թեմիս սիրեցեալ Առաջնորդին, Վշտապէս անոնց փոխանցելով Ս. Էջմիածնի յախտեմաւառ և Երկնատու օրհնութիւնն ու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հայրական յորդորներն ու ողջոյնները:

Գերշն. Տ. Ներսէս արք. Պօգապալեան, քացի կատարած վերոյիշեալ

այցելություններն և համդիպումներն, կատարեց մեկ շաբաթը մը դասախոսություններ, մերկայացնելով մեր 1700-ամեայ Եկեղեցւոյ, Մայր Հայրեմիքի, Արցախի այսօրուայ վիճակը, անդրադառնալով յոյժ կարի հարցերու և խնդիրներու, որոնք այսօր կը յուզեն մեր ժողովուրդը, առանելաբար վերջին քանի մը տարիներուն:

Տ. Ներսէս սրբազանի այցը թեմէս մերս մեծ տպաւորութիւն թողոյց իրաքահայութեան վրայ, որը ցոյց կու տայ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մշտական հետևողութիւնն ու ուշադրութիւնը իր զաւակաց հանդէպ, ուր որ ալ գտնուին անոնք: Ուստի շնորհակալիքի յատուկ խօսք մախ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Տ. Ներսէս Սրբազանին, այլև թեմիս քարեխմամ առաջնորդ Տ. Աւագ Սրբազանին, որը յետամուտ եղաւ սոյն այցելութիւնը իրագործելու համար: Եւ թող Երկնային Տէրը յարօրէն անասան պահէ Մայր Աթոռը իր զահակալով, միաբանութեամբ և հաւատաւոր ժողովրդեամբ:

Հիւր Սրբազանը Պաղտատէն մեկնեցաւ Դեկտեմբեր 1-ին՝ Բ2. օր լաւագոյն տպաւորութիւններով և յիշատակներով:

**ՄԱԿԱՐ ԱՐԷ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ**